ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3304 ք. Կապան, Ա. Մանուկյան 5ա
հեռ. +374-285-42036, 285-43868 ֆաքս
էլ.փոստ kapan.syuniq@mta.gov.am, info@kapan.am

3304 г.Капан, А.Манукян 5а
тел. +374-285-42036, 285-43868 факс
e-mail: kapan.syuniq@mta.gov.am, info@kapan.am

07 հունիսի 2022թ. N **Ե-08/3116**
Ձեր _____ N _____

«ՄԵԾ ՀԻՄՔ-1» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Ա. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան

Կապանի համայնքապետարանի և «Մեծ Հիմք-1» ՍՊԸ միջև 2021թ. սեպտեմբերի 7-ին կնքվել է «Կապանի համայնքապետարանի կարիքների համար Վերին Խոտանան և Զափնի բնակավայրերի հանդիսությունների սրահների նորոգման աշխատանքների կատարման» «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/30» ծածկագրով գնման պայմանագիրը՝ 37022000 /երեսունյոթ միլիոն քսաներկու հազար/ ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժակետ էր սահմանվել 2021թ. Դեկտեմբերի 30-ը:

Հաշվի առնելով, որ «Մեծ Հիմք-1» ՍՊԸ կողմից սահմանված ժամկետում պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել և, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2021թ. դեկտեմբերի 30-ի թիվ 2203-Ա որոշումը, երկկողմ հաստատված համաձայնագրի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժակետը երկարաձգվել է մինչև 2022թվականի հունիսի 1-ը:

Նշված ժամկետում ևս ՍՊԸ կողմից պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել և շինարարական աշխատանքներ չեն իրականացվել:

Պայմանագրի 6.3 կետի համաձայն «Մեծ Հիմք-1» ՍՊԸ կրում է տուգանքի վճարման պարտավորություն՝ պայմանագրի գնի 0,5/զրո ամբողջ հինգ տասնորդական/ տոկոսի չափով՝ 185110/մեկ հարյուր ութսունհինգ հազար հարյուր տաս/ ՀՀ դրամ գումարի չափով, որն անհրաժեշտ է վճարել Կապանի համայնքապետարանի 900315004144 հաշվեհամարին՝ ՀՀ Ֆինանսների նախարարություն, գործառնական վարչություն, ինչպես նաև ՍՊԸ կրում է որակավորման և պայմանագրի ապահովումների վճարման պարտավորություն:

Հաշվի առնելով պայմանագրային ժամկետի ավարտը և, հիմք ընդունելով պայմանագրի 3.1 կետի բ/ ենթակետը, համայնքապետարանը միակողմանի ամբողջապես լուծում է «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/30» ծածկագրով գնման պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/30» ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված և պայմանագիր կնքած անձը

համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

Կատ. Ֆինանսական բաժին